Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2743
3907
27888

w-h. B. 279.

2743

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

## ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

**1846**

ՏՊԵԱԼ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

[illegible] 1-2 [illegible]
[illegible]
R. 344:



[illegible]

## ՀԱՐՑ

Դու ի՞նչ ես։

## ՊԱՏԱՍԽԱՆԻ

Աստուծոյ շնորհօքն քրիստոնեայ եմ։

Ո՞րով եղեր ես քրիստոնեայ։

Սուրբ աւազանին ծննդեամբն, ուր մկրտեալ եմ՝ յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ։

Կատարեալ քրիստոնեայն ո՞րն է։

Կատարեալ քրիստոնեայն այն է, որ Քի հրամանը կը կատարէ, ու եկեղեցւոյ պատուիրանքը կը պահէ։

Քրիստոնէին նշանը ի՞նչ է։

Քրիստոնէին նշանը, մէյմը՝ երեսը խաչակնքելն է. և մէյմընալ՝ իւր ընկերը սիրելն է։

BIBLIOTH. MECHITH. VINDOB.
ՄԽԻԹԱՐ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ի՞նչպէս պէտք է խաչակնքել։

Այսպէս ըսելով. յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ։

Քանի՞ բան պէտք է քրիստոնէին, որ փրկութիւն գտնայ՝ և յարքայութիւն երթայ։

Չորս բան. հաւատք, յոյս, սէր, և բարի գործ։

Քանի՞ հարկաւոր բան կայ քրիստոնէին, որ անոնց պինդ հաւատայ։

Երկու. մէկը՝ սուրբ Երրորդութեան խորհուրդը, թէ Աստուած մէկ է, և երեք անձն ունի. Հայր և Որդի և սուրբ Հոգի։ Եւ մէկալ՝ մարդեղութեան խորհուրդը՝ թէ Որդին Աստուած աշխարհք եկաւ, մարմին առաւ, մեզ նման մարդ եղաւ. և իրեն չարչարանքովը և մեռնելովը՝ մեզի սատանային ձեռքէն ազատեց։

Ո՞ր բանի պինդ յուսանք։

Այս երկու բանիս. մէկը՝ թէ քանի կենդանի եմք, Աստուած իւր շնորհքը մեզի կուտայ. և մէկալը՝ թէ երբ որ մեռանիմք, Աստուած իւր արքայութեան փառքը մեզի կուտայ։

Ո՞վ պիտի սիրեմք։

Մէյմը Ած, և մէյմը մեր ընկերը։

Ի՞նչ բարեգործութիւն պիտի գործեմք։

Ած հրամանը կատարեմք. սբ. եկեղեցւոյ պատուիրանքը տեղը տանիմք. աղօթք ընեմք. պաք պահեմք. և ողորմութիւն տամք։

Աստուած ի՞նչ է։

Ամէն ստեղծուածներուն ստեղծօղն է. ինքն հիչ մէկէմը ստեղծուած չէ. երեք անձն և մի բնութի է. ամենաբարի է. ամենազօր է. ամենատես է. ո՛չ սկիզբն ունի, և ո՛չ վերջ ունի. յաւիտենական և անփոփոխելի է։

Աստուած ո՞ւր է։

Աստուած ամէն տեղ է։

Հապա ի՞նչու երկի՞նքն է կըսենք։

Երկինքը՝ ամէնէն բարձր և պատուաւոր տեղի է. հրեշտակները և սբց հոգիքը հոն են. և արքայութիւնը Ած այն տեղը սահմաներ է. անոր համար Ած յերկինս է կըսեմք. զերէ Ած ամէն տեղ է։

Հայր աստուած է։

**Այո՛ աստուած է։**

Որդին աստուած է։

**Այո՛ աստուած է։**

Հոգին սուրբ աստուած է։

**Այո՛ աստուած է։**

Անանկ է նէ, երեք աստուած կը լինին։

**Չեն ըլլար երեք ած, այլ մի ած է. զէրէ երեք անձինքն մէկ ըզ մէկէ բաժանուած չեն. այլ մէկ բնութի, և մէկ ածութիւն ունին։**

Կրնաս մէկ օրինակ մը տալ ինձ, որ խելքս հասնի։

**Քեզի օրինակ ըլլայ արեւն. ահա նախ ինքն արեգակն. երկրորդ՝ լոյսն. երրորդ՝ տաքութին. որ այս երեքս մի են. զէրէ բաժանեալ չեն։**
**Նաև՝ ակին ջուրն. ակէն վազած գետին ջուրն, և աւազանի մէջ լըցուած ջուրն, ուրիշ ուրիշ են, սակայն մէկ ըզ մէկէ բաժանուած չեն. երեքն մէկ ջուր են։**

*Կրնա՞ս ուրիշ պարզ օրինակ մը ևս տալ ինձ, որ աղէկ մը տեղեկանամ։*

Ահա տամ քեզ՝ մէկ հեշտ հասկընալու, և յայտնի օրինակ մի։

Նայէ այս գիրը (ա), որ երեք ճիւղ կամ սիւն ունի. ամմէն մէկ սիւն՝ կատարեալ այբ է. մէկ ըզ մէկէ աւելի և պակաս զօրութի̅ չունին. և երեք սիւնքն մէկ տեղ գոլով մէկ այբ կըսուի, և ո՛չ երեք այբ։

Այսպէս հայր ա̅ծ, որդին ա̅ծ, հոգին ս̅բ ա̅ծ, երեք անձինք են, այլ երեք ա̅ծ չեն, մէկ ա̅ծ է. մէկ զօրութի̅ և արարչութիւն ունին։

*Ինչո՞ւ կը խաչակնքեմք ըզմեզ։*

Մէյմը այս է, թէ որովհետև ս̅բ խաչըն՝ քր̅ի նշանն է. քր̅ի նշանը մեր վր̅ ունենալով՝ յայտնի կըլլնիմք թէ քրիստոնեայ եմք՝ և քր̅ի ծառայ. և մէկալը՝ որ խաչակնքած ժամանակնիս՝ ս̅բ երրորդութ̅ե անունը կը յիշեմք. և ասով ս̅բ երրորդութ̅ե հաւատալնիս, և երկըրպագութիւն ընելնիս կիմացվի։

## ԳԼՈՒԽ · Բ ·

Հաւատոյ հանգանակը գրեմ։

Այո՛ գրեմ. Հաւատամ ՚ի մի աստուած՝ ՚ի հայրն ամենակալ . և այլն ։

Այս հանգանակը քանի՞ մասունք կամ աստիճան ունի, և ո՞վ ըսաւ։

Տասներկու աստիճան ունի, և ս̃բ առաքեալները՝ երուսաղէմ քաղաքը՝ ս̃բ սիօն վերնատունը սահմանեցին։

Ո՞րն է առաջին աստիճանն, և այն ո՞ր առաքեալ ըսաւ։

Առաջին աստիճանն է այս ։ Հաւատամ ՚ի մի աստուած՝ ՚ի հայրն ամենակալ՝ արարիչն երկնի և երկրի ։

Եւ զայս՝ պետրոս առաքեալը ըսաւ ։

Մեկնէ որ իմանամ։

Ես կը հաւատամ՝ թէ մէկ է ա̃ծ . և այս մէկ ա̃ծութե̃ առաջին անձն հայր ամենակարողն է, որ երկինքը և երկիրս և զա̃մ ինչ որ կայնէ, իւր ամենակարողութե̃ը յոչնչէ ստեղծեց ։

Ո՞րն է երկրորդ աստիճանն, և ո՞ր առաքեալ ըսաւ:

Երկրորդ աստիճանն է այս: Եւ ՚ի Տր Յս Քս որդին Այ: Եւ այս ըսաւ յովհաննէս աւետարանիչն:

Մեկնէ որ իմանամ:

Ես կը հաւատամ՝ թէ Յս Քս հօր Այ որդին է. և ինչպէս՝ հայր Այ ամենակալ է, երկնի և երկրի ստեղծօղ է. Յս Քս ալ՝ հօր Այ պէս ամենակալ է, երկնի և երկրի արարիչ է:

Ո՞րն է երրորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ:

Երրորդ աստիճանն է այս: Մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ չարչարեցաւ ՚ի ժամանակս Սբյ Կուսէն հոգւովն Սբյ: Եւ այս ըսաւ յովհաննէս աւետարանչին եղբայրն՝ յակոբոս առաքեալն:

Մեկնէ որ իմանամ:

Ես կը հաւատամ՝ թէ Յս Քս ճշմարիտ Ածը՝ մեզի փրկելու համար աշխարհք եկաւ. հոգւոյն սբյ զօրութեմբ՝ սբ կոյս մարիամ Ածածինէն ծնաւ. մեղքէն ՚ի զատ մարդկային բոլոր բնութիւնն առաւ.

հոգւով՝ մօք՝ մարմնով՝ ճշմարիտ և կատարեալ մարդ եղաւ. ոչ ա̃ծութիւնը ՚ի մարմին փոխուեցաւ, և ոչ մարմինը յա̃ծութ̃ի փոխուեցաւ:

Ո՞րն է չորրորդ աստիճանն, և ի՞նչ ըսաւ:

Չորրորդ աստիճանն է այս: Չարչարեցաւ, խաչեցաւ, թաղեցաւ: Եւ այս ըսաւ անդրէաս առաքեալն:

Մեկնէ որ իմանամ:

Աս կը հաւատամ՝ թէ յս̃ քս̃ մեզի այնքան սիրեց, որ դժոխքին տանջանքէն՝ և սա̃նյի ձեռքէն մեզի ազատելու համար, հրէից ազգէն չարչարուեցաւ՝ պոնտացի պիղատոս դատաւորին իշխանութե̃ ժամանակը, և ու̃ք խաչափայտին վերայ մեռաւ:

Այս ժամանակը ք̃ի հոգին ու մարմինը մէկ ըղ մէկէ բաժանուեցան. լաքին ք̃ի ա̃ծութ̃իը ոչ հոգիէն բաժանուեցաւ, և ոչ մարմինէն:

Օրինակ մը տուր որ խելքս հասնի:

Քեզ օրինակ ըլլայ աղեղը, այսինքն՝ օխէն եայը. թէ ասոր թէլին մէջ տեղէն

կոտրես, այն Թէլն՝ մէկըղ մէկէ կը բաժ-նըվի. լաքին աղեղը երկու կտոր Թէլէն ալ չի բաժանվիր։ Ահա Թէլը կընշանա-կէ քու մարմինը և հոգին, որ մահուան ժամանակը բաժանվեցան. աղեղը կը նշանակէ քու ածուծը, որ ոչ հոգիէն բաժանվեցաւ, և ոչ մարմինէն։

Ո՞րն է հինգերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Հինգերորդ աստիճանն է այս. Եղջ ՚ի դծուխս։ Եւ այս ըսաւ Թովմաս ա-ռաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Ես կը հաւատամ, Թէ յս քս երբ որ խաչին վերայ մեռաւ, մարմնովը նորա-փոր գերեզմանի մէջ Թաղվեցաւ, և հոգւովը դժոխքը իջաւ. դժոխքը քա-կեց. և այն զնդանին մէջը եղեալ սբ-նահապետներուն, և մարգարէներուն, և արդարներուն հոգիքը ազատեց։ Ուստի անոնք որ ադամայ սկզբնական մեղացը համար այն բանտին մէջը ար-գելված էին՝ քս չարչարանքովը և մահ-ուամբը փրկեցան, և երկինքը ելան։

Ո՞րն է վեցերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Վեցերորդ աստիճանն է այս․ Յերրորդ աւուր յարուցեալ 'ի մեռելոց։ Եւ այս ըսաւ Բարդուղիմէոս առաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Այս կը հաւատամ, թէ յս̃ քս̃ երեք օրէն յետոյ՝ շաբաթ գիշերը որ կիրակի կը լուսնայր՝ իւր ա̃ծային զօրուե̃ն յա-րութի̃ առաւ անապական մարմնով։

Ո՞րն է եօթներորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Եօթներորդ աստիճանն է այս․ Համ-բարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր։ Եւ այս ըսաւ Փիլիպպոս առաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Այս կը հաւատամ, թէ յս̃ քս̃ յետ քա-ռասուն աւուր յարութե̃ն՝ իւր ա̃ծային կարողութե̃ն երկինքը համբարձաւ․ և հօր ա̃յ աջ կողմը նստաւ, որոյ հետն հա-ւասար է փառօք և իշխանութե̃․ և իւր հաւատացելոցը միշտ օգնութի̃ կընէ։

Ո՞րն է ութերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Ութերորդ աստիճանն է այս․ Գալոց

է դատէլ զկենդանիս և զմեռեալս ։ Եւ այս ըստ մատթէոս աւետարանիչն ։

Մեկնէ որ իմանամ։

Ես կը հաւատամ, թէ Յ՟ս Ք՟ս աշխարհքիս վերջը դատաստան պիտի գայ անթիւ հրեշտակներով. արդարները յաջ կողմը պիտի կանգնեցընէ, և մեղաւորները ձախ կողմը ։ Արդարները արքայութի̅ կը տանի, որ յաւիտենական փառք ու պատիւը հոգւով մարմնով վայելեն, և մեղաւորները և անհաւատները դըժոխքը կուղարկէ, որ յաւիտենական պատիժ և տանջանք կրեն ։

Ո՞րն է իններորդ աստիճանն, և ո՞վ ըստաւ ։

Իններորդ աստիճանն է այս. Հաւատամ ՚ի հոգին ս՟բ ։ Եւ այս ըստ յակոբոս ալփեան ։

Մեկնէ որ իմանամ։

Ես կը հաւատամ ՚ի հոգին ս՟բ. որ հօր և որդւոյ էակից և համագոյ է ։ Եւ ինչպէս հայր և որդի անեղ և կատարեալ են, նոյնպէս և հոգին ս՟բ ա՟ծ անեղ և կատարեալ է. և մեք քանի որ

քայս աշխարհս եմք, իւր շնորհքը մեզի կուտայ, որ փրկութեան հասնիմք։

Ո՞րն է տասներորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Տասներորդ աստիճանն է այս. ՚Ի մէկ կաթուղիկէ եկեղեցի։ Եւ այս ըսաւ սիմոն կանանացին։

Մեկնէ որ իմանամ։

Ես կըհաւատամ՚ի մէկ կաթուղիկէ եկեղեցին։ Աղէկ իմացիր, որ կաթուղիկէ եկեղեցին՝ չէ այս քարաշէն և փայտաշէն եկեղեցին, որ կըսուի նիւթական եկեղեցի. այլ ամ քրիստոնէից ժողովն է, որ կըսուի զինուորեալ եկեղեցի։ Որ ամենքն ՚ի միասին մէկ մարմին են մեր գլխոյ. և այն գլուխն է որն մեր յս քս. և մէկ հաւատք, մէկ մկրտուի, և մէկ սրբարար շնորհք ունին ամենքն. և միմեանց հետ հաղորդուի կընեն աղօթքով և բարի գործով։ Աստի կաղօթեմք յարեւադալի ժամուն՝ ասելով. Յարեւելից մինչեւ յարեւմուտս ընդ ամ տեղիս քրիստոնէութե, որք և չորքդան ցանկուն ամն սրբուէ. Տր աղօթիւք նց և բարեխօսութեն մեզ ողորմեսցի։

Նաւ այս ուղղափառ եկեղեցին ունի այս չորս արտաքին նշանս, զի, մի՛ սբ՛ կաթուղիկէ և առաքելական։ Ինչպէս կը քարոզէ եկեղեցին. Ըղաշէ այսու՝ ղամենաչաղն ած. վս միայնոյ՝ սբ՝ կաթուղիկէ՝ և առաքելական եկեղեցւոյ։

Ո՞րն է տասնմէկերորդ պատուիրանն, և ի՞նչ ըսաւ։

Տասն և մէկերորդ պատուիրանն է այս. ՚Ի Նոյեմբ. Միշոյ։ Նաւ այս ըսաւ Թադէոս առաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Նա կը հաւատամ՝ թէ այս սբ եկեղեցւոյ մէջ՝ մեղաց թողութիւն կըլլայ. զէրէ ով որ իւր մեղքը զղջայ, խոստովանի, և ապաշխարէ, և քի սբ մարմնոյ և արեանն հաղորդի, հարկաւ թողութիւն կը գըտնայ։ Նաւ այս իշխանութիւնը ած տուաւ քահանայից, որ զղջացող մեղաւորին արձակում և թողութիւն տան։

Ո՞րն է տասներկուերորդ պատուիրանն, և ի՞նչ ըսաւ։

Տասն երկու երորդ պատուիրանն է այս. Ի ցորեան ժամանակի, ՚ի պատարագին ջանասիրեսցի։ Նաւ այս ըսաւ Մատաթիա առաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Այս կը հաւատամ, թէ դատաստանին օրն՝ մեռեալներն իւրեանց մարմնովը յարութիւն կառնեն. բարի քրիստոնեայները յարքայութիւն կերթան, և անհաւատները և չար քրիստոնեայները դժոխքը։

## ԳԼՈՒԽ. Գ

Ո՞վ ստեղծ զքեզ, և վասն ի՞նչ պատճառի։

Աստուած ստեղծ զիս. որ քանի կենդանի եմ, իւր ծառայութիւն ընեմ, իւր պաշտօն մատուցանեմ. և երբ որ մեռանիմ, արքայութեան փառացը հասնիմ։

Ի՞նչով կըլլայ աստուծոյ ծառայութիւն ընել։

Այս երկու բանովս կըլլայ. մէյմը՝ որ իւր վախը և երկիւղը սրտերնուս մէջը միշտ կունենանք. և մէկալ՝ իւր պատուիրանքը սիրով և զգուշութեամբ կը պահենք։

Ի՞նչով կըլլայ աստուածպաշտութիւն ընել։

Այս երեք բանովս կըլլայ. նախ՝ ներ-

քին մտօք և հոգւով ա̃յ մեծու̃նը կը հաւատամք։ Երկրորդ՝ արտաքին կերպով՝ ահիւ և դողութ̃բ ա̃յ ծունր կը դնեմք, երկրպագութի̃ն կընեմք։ Երրորդ՝ ս̃բ պատարագ կը տեսնամք, ա̃յ աղօթք և աղաչանք կը մատուցանեմք։

Աղօթքն ի՞նչ է։

Աղօթքն է, որ միտքըդ առ ա̃ծ կը վերցունես, քեզի ըրած բարերարութ̃ե համար շնորհակալ կըլլաս, և արժանաւոր բան մը կը խնդրես։ Աս այս երկու կերպ է․ մէկն միայն սրտիւ և մտօք, և կըսուի մտաւորական աղօթք։ Աս մէկը՝ բերանով և ձայնիւ, և կըսուի ձայնաւոր աղօթք։

Ինչո՞ւ համար աղօթքնիս երբեմն ընդունելի չի ըլլար։

Երեք պատճառ ունի․ մէկն այն է, որ հաստատուն հաւատով և յուսով չենք խնդրեր, այլ երկմտութ̃բ և թերահաւատութ̃բ, ըս̃՝ Յակոբով։ Երկրորդ՝ անպէտ և անարժան բան կը

ՓԻՅԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

խնդրեմք . ինչպա՛ գեղեցիկ տուն . չափէն աւելի տաք է և տպրանք , և այլն ։ Ուստի կըսէ յանկուցս առաքէն . Խօսեցէ՞ք և ով տանու՞ք , մի՞ մի չարաչար խնդրէ՞ք ։ Եղբարք՝ մեր խոստովանութեան համար է . զէրէ մենք երբ որ անդութ և քարասիրտ կըլլանք , մեզի աղաչողին ձայնին չենք լսէր , ան մեր ձայնը ինչպէս պիտի լսէ ։ Ուստի եթէ մենք անխղճաջար ըլլանք , մեր ընկերին յանցանքը ներենք, ան ալ մեր յանցանքը կըներէ ։ այս է որ կըսենք տէրունական աղօթքին մէջը . Թո՛ղ մեզ զպարտիս մեր , որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։

Այս տէրունական աղօթքն , որ լսեմ ։

Հայր մեր որ յերկինս , սուրբ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի . զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր . և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց . և մի տանիր զմեզ՚ի փորձութիւն . այլ փրկեա զմեզ՚ի չարէ . զի քո է արքայութիւն և զօրութիւն , և փառք յաւիտեանս , ամէն ։

Ինչու՞ տէրունական աղօթք կըսուի ։

Զէրէ քի՛ Տէրը սորվըցուց մեզի այս աղօթքը․ և ամմէն աղօթքներէն աւելի մեծ և զօրաւոր է․ անոր համար ամմէն քրիստոնէի պէտք է բերան գիտնալ և ըսել, և իւր զաւակացը սորվեցընել ։

Պահքն ի՞նչ է ։

Պահքն է, որ մարդ իւր անձը կընեղէ, և զինքը կարգիլէ՝ փափուկ, պարարտ, և գիրցընօղ կերակուրներէն, այն օրերը՝ որ մեր եկեղեցին սահմաներէ ։

Անկից ուրիշ պահք կա՞յ մի ։

Այո՛ կայ ուրիշ հարկաւոր պահք մը, որ կըսուի ներքին պահք․ և այս է, որ մարդըս կը պահէ իւր սիրտը և միտքը չար մտածմունքէն․ բերանը՝ հայհոյութենէ և սուտ խօսելէն․ աչքը՝ դէշ նայելէն․ ականջը՝ առասպել խօսք և բամբասանք լսելէն․ ձեռքը՝ չար գործելէն ։

Ողորմութիւնն ի՞նչ է ։

Ողորմութիւնը այն է․ որ կարօտեալ և խղճալի մարդոյ օգնութիւն կընեմք, և նեղութենէն կազատեմք ։

Ողորմութիւնը քանի՞ կերպ է։

Երկու կերպ. մէկը մարմնաւոր, և մէկը հոգևոր։

Որո՞նք են մարմնաւոր ողորմութիւն։

Այս եօթն են. կերակրել զքաղցեալս. արբուցանել զծարաւեալս. զգեցուցանել զմերկս. ժողովել զօտարս և զղարիպս. ի տես գնալ հիւանդաց. երթալ մխիթարել զբանտարգեալս. թաղել զանտէր մեռեալս։

Որո՞նք են հոգևոր ողորմութիւն։

Այս եօթն են. բարի խորհուրդ տալ երկմիտ մարդուն. խրատել և սորվեցնել տգէտը. յանդիմանել և չեխել մեղքէն ետ չի դարձողը. ցաւակից ըլլալ և մխիթարել տրտումը. ներել ընկերին յանցանքը և սուչը. համբերել նեղութե, և դժգոհանք չընել. աղօթք ընել հաւասար կենդանեաց և մեռելոց համար։

## ԳԼՈՒԽ · Դ

Աստուծոյ օրէնքը կամ պատուիրանքը քանի՞ է։

Աստուծոյ պատուիրանքը տասն է. և Մովսէս մարգարէին ձեռքը տուաւ Ած Սինա լեռը, երկու քարեղէն տախտակի վերայ գրած։

Ո՞րն է առաջին պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Առաջինն է այս. Ես եմ Տր Ած քո. մի՛ եղիցին քեզ Ածք բաց յինէն։ Այս հրամանաւ մեզ կը պատուիրէ, որ միայն երկնի և երկրի՝ և ամ եղելոց արարիչ Ածը հաւատալ, և ուրիշը չի պաշտել։

Ո՞րն է երկրորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Երկրորդն այս է. Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամ նմանութե. մի՛ երկիրպագանիցես նոցա. և մի՛ պաշտեսցես զնս։ Այս հրամանաւ կը պատուիրէ, ոսկիէ, արծաթէ, քարէ փայտէ, և կամ այլ ինչ նիւթէ կուռք չի շինել, և անոր երկրպագուն չընել։ Ուստի ագահ մարդը, որ ոսկին ու արծաթը չափէն աւելի կը սիրէ ու պատ-

ուէ, կուապաշտ կը սեպուի․ անոր համար պօղոս առաքեալը կը գրէ․ Ի բաց ընկե-ցէք զագահութիւն, որ է կռապաշտութիւն:

Մէկ անհաւատը թէ որ հարցընէ, հապա խաչե-պատկերը կը շինէք, և անոր երկրպագութիւն կընէք:

Անոր ըսէ թէ, մենք պատկերքը ած է չենք ըսեր, քաւ լիցի․ այլ պատ-կերքը տեսնալով, անոր տէրը միտք կը բերենք: Եթէ սրց պատկերքն է, խո-նարհութիւն և պատիւ կընեմք․ և այն սբը մեզի բարեխօս կը բռնեմք: Իսկ եթէ տէրունական և ածային պատկեր է, ծնրադրութիւն և երկրպա-գութիւն կընեմք․ և այս մեր ըրած խո-նարհութիւնը և երկրպագութիւնը՝ պատ-կերքին տէրոջը կը վերաբերի․ անոր համար ձեռագործ պաշտող չենք, այլ ճշմարիտ ածապաշտենք:

Ո՞րն է երրորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք:

Երրորդ պատուէրն է․ Մի՛ առնու-ցուս զանուն Տն Այ քո ՚ի վերայ սնոտեաց: Իսկ այս հրամանս մեզ կը պատուիրէ, Այ երկրպագելի անունը՝ դատարկ տե-

ղըն չի յիշենք. կամ սուտ բանի համար վկայ չի բերենք: Օ երբ ունայն և ոչինչ խօսքի համար՝ այ ահեղ անունը յիշելը՝ սուտ երդում ընել է:

Նաև՝ այն քրիստոնեայն որ անունով միայն քրիստոնեայ է, և միրտուն շը-նորհք և քրիստոնէի գործք չունի, այ անունը ՚ի վր սնոտեաց առնօղ է:

Ո՞րն է չորրորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք:

Չորրորդն է. Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա: Նու այս պատուէրը մեզի կը սորվեցընէ, վեց օր մարմնաւոր գործ ընել, և մէկ օր հանգչիլ, և այ փառա-բանուն և աղօթից և հոգևոր գոր-ծոց պարապիլ:

Ած շաբաթ օրը պատուիրեց հանգչիլ, ինչու մր առաքեալները կիրակի օրը սահմանեցին:

Պատճառն այս է. զի երբ քս տրն մեր կիրակի օրը յարութի առաւ, և մեզի սոնյին ծառայութենէն ազատեց. և ՚ի պատիւ քսի յարուեր սահմանեցին մր առաքեալները՝ կիրակի օրը ծառայա-կան գործքէ ազատ կենալ:

Ո՞րն է հինգերորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Հինգերորդն է. Պատուեա՛ զհայր քո և զմայր քո. զի քեզ բարի լինիցի. և երկայնակեաց լինիցիս ՚ի վերայ երկրին բարութ̅ե։ Աս այս պատուէրըս մեզի կը սորվեցընէ, թէ ծնօղքդ պատուէ խոնարհութ̅ե և պատկառանքով. անոնց հարկաւոր պէտքը քո կարողութ̅եդ չափ հոգայ, և մի՛ տրտմեցըներ. որ ա̅ծ քեզի բարի ընէ, և շատ ապրիս։

Այս պատուէրէն այլ ինչ կիմացվի։

Հայր ըսելով կիմացվի ա̅մ երախտիք և բարութ̅ի ընողները. ինչպէս՝ Թագաւորը, իշխանը, վարդապետը, վարժապետը. և անոնք ամենայն՝ որ հօր պէս գութ և խնամք ունին մեր վրայ, և մեր աղէկութ̅եր պատճառ կըլլան։

Ո՞րն է վեցերորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Վեցերորդն է. Մի՛ սպանաներ։ Աս այս հրամանս կարգիլէ՝ առանց իրաւանց մարդ ըսպանանելը. ինչպէս՝ որ դատաւոր չէ, իշխանութ̅ի չունի, և մարդ

կըսպանանէ․ և կամ թէ իշխանութի՟ ունի, և դատարկ տեղն կըսպանանէ։ Եւ չիւնքի մարդասպանութի՟ն շատ անգամ յառաջ կուգայ բարկութէ՟ն․ անոր համար քս՟ տրն՟ մեր հրամայեց, թէ մի՛ բարկանայք․ և ըսաւ՝ թէ Ո՞վ որ բարկանայ եղբօր իւրում պարապարտուց, պարտաւոր լինի գեհենոյն։

Քանի՞ կերպ է մարդասպանութիւնն․

Երկու կերպ է․ մէկը մարմնաւոր է, որ մարդոյ մարմինը և հոգին մէկ ըզ մէկէ կը բաժանէ․ և մէկալը հոգևոր է, որ իւր հաւատակից եղբայրը և ընկերը կատէ․ ասոր համար կըսէ յովհաննէս աւետարանիչը․ թէ Որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է։

Ո՞րն է եօթներորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Եօթներորդն է․ Մի՛ շնար։ Եւ այս հրամանս մեզի կարգիլէ ամէն չար գործքէ․ որով կը խրատիմք, պարկեշտ և սբ՟ պահել մեր հոգին և մարմինն։

Ո՞րն է ութերորդ պատուէրը և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Ութերորդն է. Մի՛ գողանար։ Եւ այս հրամանս մեզի կարգիլէ այն ամէն բանէն որ օտարին է՝ չը գողնալ, և չը յափշտակել, ոչ ծածուկ, և ոչ յայտնի։

Ուրիշ կերպ գողութիւն ալ կա՞յ մի։

Նաև գողութի՛ւ կըսեպվի՝ բանվորին վարձքը օրէ օր ձգել. կամ էվէլ պակաս չափ գործ ածել. կամ լաւը ցըցընել, և գէշը տալ։ Եւ գիտցիր, որ այլ մեղքերը ապաշխարանքով կը ջնջվին, այլ գողութի՛ւն ՚ի տէրն պիտի դառնայ։

Ո՞րն է իններորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Իններորդն է. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։ Եւ այս հրամանս մեզի կարգիլէ այն ամէն բանէն, որուն աղէկ տեղեակ չենք, վկայութի՛ւ չի տանք։

Ուրիշ կերպ սուտ վկայութիւն ալ կա՞յ մի։

Կայ՝ սուտ վկայ են բանբասողները՝ որ ընկերին բարի անունը կապականեն։ Սուտ վկայ են բանսարկութի՛ւ ընողները, որ տարաձայնութիւն և կռիւ

կը ձգեն՝ տան և ընտանեաց մէջ, բարեկամի մէջ, ընկերի մէջ, և այլն. Սուտ վկայ է մարդահաճոյն, այսինքն, Ճորբաջի խօսօղն որ աչքէ չելլալու համար, սուտ խօսքերուն՝ այո՛ այդպէս է կըսէ. Դաւիթ մարգարէն զայսպիսի մարդն կանիծէ ասելով. Ած ցրուեաց զոսկերս մարդահաճոյից: Աստի ամէն սուտ խօսօղները՝ որդի սատնյի կը կոչէ տրն մեր, զէրէ կըսէ. Եր սուտ խօսէ, յիւրոց անտի խօսէ. զի սուտ է և հայր նր ստութեանց. և կը պատուիրէ, Թէ եղիցի բան ձեր, այո՛ն այո՛. և ոչն ոչ:

Ո՞րն է տասներորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք:

Տասներորդն է. Մի՛ ցանկանար տան ընկերի քո, և մի՛ անդոյ նր. մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, և մի՛ ծառայից նր. և մի՛ ամ զինչ ընկերի քո իցէ: Ու այս հրամանաւս կարգելէ ած մեր սիրտը՝ ամէն կերպ չար ցանկութենէ. և բաւական պիտի համարինք այն, որ ինչ ած մեզի տրվեր է, թէ տուն, և թէ այլ ինչ ստացուածք: Ո՛ երբ ցանկութիւնը մեղք կը ծնանի. և

մեղքը՝ մահ և դատապարտութին կըբերէ։
Նաև որովհետև սրտին դուռը՝ մարդուս աչքն է. պէտք է որ աչքերնիս զգուշութ՟ պահպանեմք. որ ցանկութ՟ը դողի նման սրտերնիս չի մըտնայ, և մեր հոգին չըսպանանէ։

Ո՞րն է ամէն պատուիրանաց կատարումը։

Ամէն օրինաց և պատուիրանաց կատարումը սէրն է. ինչպէս պօղոս առաքեալը կըգրէ, եթէ Լրումն օրինաց սէր է, 'ի ս͞բ սրտէ, և 'ի մտաց բարեաց, և յանկեղծաւոր հաւատոյ։

Առաջ ո՞վ պիտի սիրեմք։

Նախ և առաջ պարտաւոր եմք զԱ͞ծ սիրել. որ մեզի ստեղծեր է, և կը խնամէ։ Նա՛ հայր Ա͞ծ զորդին միածին աշխարհք ղրկեց մեզի փրկելու համար։ Որդին միածին եկաւ, մարմին առաւ, մեզի փրկեց։ Հոգին Ս͞բ իւր շնորհքը մեզ կուտայ, որ ճշմարտութ՟ը ճանաչեմք, և բարին կամենամք։

Երկրորդ՝ ո՞վ պիտի սիրեմք։

Երկրորդ՝ մեր անձը պիտի սիրեմք.

մեղքէն հեռու պահեմք ․ բարի գործեմք ․ որ ա̃ծային ողորմութե̃ը և արքայութեանը հասնիմք ։

Երրորդ՝ ո՛վ պիտի սիրեմք ։

Երրորդ՝ մեր ընկերը պիտի սիրեմք՝ մեր անձին նման ․ զէրէ մէկ աւազանէ ծնեալ եղբայր եմք ․ մէկ հաւատք, մէկ մկրտութիւն ունիմք ․ և մէկ արքայութիւն պիտի երթամք ։ Եւ ս̃բ առաքեալը կըսէ թէ, ո՛վ որ իւր եղբայրը կատէ, մարդասպան է ։

## ԳԼՈՒԽ ․ Ե

Սուրբ եկեղեցւոյ խորհուրդը ի՞նչ է ։

Եկեղեցւոյ խորհուրդը՝ ա̃յ անտեսանելի շնորհացը արտաքին և զգալի նշան մի է, որ անով ա̃ծային շնորհքը մեզի կը տրուի ։

Քանի՞ է ։

Եօթն է, այսինքն՝ մկրտութի̃, դրոշմ,

հաղորդութիւն, ապաշխարութիւն, վերջին օծում, կարգ, պսակ։

Մկրտութիւնն ի՞նչ է։

Մկրտութիւն՝ վերստին և հոգևոր ծնունդ մի է․ որ սուրբ աւազանին մէջը մեր մարմինը կը լուացուի ջրով յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ․ և մեր հոգին կը մաքրի յադամայ ըսկզբնական մեղքէն։

Դրոշմն ի՞նչ է։

Դրոշմն է օծումն սրբալոյս միւռոնին, որ օծեալ և կնքեալ կըլլայ մկրտեալն․ և այս անջնջելի նշանովը Քրիստոսի զօրապետին յատուկ զինուոր կը լինի։

Քանի՞ տեղ օծում կըլլայ մկրտեալ տղայն։

Ինը տեղ, այսինքն՝ ճակատը, աչքը, ականջը, հոտոտելիքը, բերանը, ափը, սիրտը, քամակը, ոտքը։

Այս օծումը կամ կնիքը՝ ի՞նչ զօրութիւն ունին։

Ճակատին կնիքը՝ համարձակութիւն կուտայ Քրիստոսի սուրբ հաւատքը աներկիւղ դաւանելու։ Աչքերին կնիքը՝ հոգւոյ

2

աչքը կը լուսաւորէ , որ միշտ արթուն և պատրաստ մնայ ։ Ականջաց կնիքը՝ հոգւոյ ականջը կը բանայ , որ ա̅ծային պատուէրանքը լսէ ։ Հոտոտելեաց կնիքը՝ յաւիտենական կենաց անմահական հոտովը՝ հոգին կը զմայլեցընէ ։ Բերանին կնիքը՝ պահապան կըլլայ բերնին , որ չար չի խօսի ։ Ափին կնիքը՝ զօրութիւն և ոյժ կուտայ ձեռքին , որ բարի գործէ ։ Սրտին կնիքը՝ հոգին կը սրբէ , կը նորոգէ , և կը հաստատէ , որ միշտ բարի խորհի ։ «Քամակին կնիքը՝ վահան՝ այսինքն խաչխան կըլլայ կռնակը , որ սատանային նետը չի խոցէ ։ Ոտից կնիքը՝ ոտքերը կուղղէ , որ արքայութեան ճանապարհը երթայ ։ Եւ այս կնիքներըս մէյմէկ ահաւոր զէն կըլլան մըմկրտեալ տղային , որ անոնցմով կը պատերազմի սատանայի՝ և մարմնոյ՝ և աշխարհի դէմ , և կը յաղթէ ․ և ք̅ս թագաւորէն անթառամ պսակ կառնու ։

Հաղորդութիւն ի՛նչ է:

Հաղորդութիւնն՝ Քրիստոսի սուրբ մարմնոյ և արեան խորհուրդն է, որ արտաքին տեսութեամբ հաց և գինի կերևնայ, այլ իսկապէս Քրիստոս է. և մեք անոր ճաշակմամբը՝ կեանք և կենդանութիւն կըստանամք: Նաև՝ Քրիստոսի սէրը միտքերնիս կը բերեմք և կը յիշեմք, թէ մեզի այնքան սիրեց, մինչև որ իւր մարմինը և արիւնը մեզի հոգևոր կերակուր և ըմպելի տուաւ, որով մեր հոգին կենդանի կըլլայ:

Ես կը կաւատամ, թէ սրբագործեալ նշխարքն իսկապէս Քրիստոս է. միայն զայս կուզեմ սորվիլ, երբ որ քահանայն մէկ նշխարքը մասն մասն կը բաժանէ, ի՞նչպէս ամբողջ կը մնայ մէկ Քրիստոս այն բաժանեալ մասանց մէջը. ուստի կը խնդրեմ ինձ մէկ օրինակ մի տալ որ խելքս հասնի:

Քեզի օրինակ ահա արեգակը, որ մէկ հատ է աշխարհքիս մէջ, և մէկ կերևնայ ամբողջ հայելիին մէջը. և եթէ կոտոր կոտոր ընես այն հայելին, մի և նոյն արեգակն է, որ կերևնայ ամմէն մէկ կոտոր հայելիին մէջը, և իւր ամբողջութիւնը չի կորսնցներ. այսպէս մէկ Քրիստոս

է ամբողջ նշխարքին մէջ, և բեկեալ մասանց մէջ:

Ապաշխարութիւնն ի՞նչ է:

Ապաշխարութիւն է, իւր գործեալ մեղքը լալ, և կամաւոր պատիժ կրել:

Քանի՞ բան պէտք է ապաշխարութեան:

Չորս բան. առաջինն է՝ զղջումն գործեալ մեղքին: Երկրորդն է՝ առաջադրութիւն կրկին անգամ չի գործելոյ: Երրորդն է՝ ճշմարիտ խոստովանութիւն առաջի քահանային: Չորրորդն է՝ կատարեալ վճարումն դրած ապաշխարանքին: Եւ այս սբ խորհուրդը՝ քահանային արձակում տալովը կը ջնջէ բոլոր ներգործական մեղքերը, եթէ մահացուն, և եթէ ներելին:

Վերջին օծումն ի՞նչ է:

Վերջին օծումը՝ հոգւոյ և մարմնոյ առողջարար դեղ մի է, որ քահանայական աղօթքին զօրութեամբն ծանր հիւանդները կը բժշկէ, և անոնց ներելի մեղքը կը քաւէ:

Հայոց սուրբ եկեղեցին վերջին օծման խորհուրդը կը կատարէ՞ մի ։

Այո՛ ծանր հիւանդներուն վրայ քանի անգամ հարկաւորինէ՝ կը կատարէ. և այս սուրբ խորհուրդն է՝ որ կըսվի Կէնէր-ծանուր քահանայքն կը կարդան սաղմոս, գիրք, բժշկութեան աւետարան, աղօթք. և յետոյ փարատեցո՛ զցաւս կըսեն ։

Մի՞ թէ օրհնեալ իւղով հիւանդը օծել հարկաւոր է ։

Իւղով օծել՝ ազգային ծէս, և խորհրդական արարողութիւն մի է, և հաւատոյ մաս չէ, անոր համար իւղոյ գործածութիւն հարկաւոր չէ. զէրէ ասանկ ծխական արարողութիւններ ամէն քրիստոնեայ ազգի մէջ՝ կըլլայ որ կը փոփոխվին, և կըլլայ որ կը խափանվին ։ Իսկ բուն զօրութիւնը այս խորհրդոյս է քահանայական աղօթքը և ընթերցուածքը. և այն է հաւատոյ մասը և հարկաւորը, և այս ամենևին չի խափանիր. ինչպէս կը գրէ մեծն խոսրով ժամագրքի մեկնութեան մէջը 281 երեսը ։

Ուստի կըսէ յակոբոս առաքեալն, թէ Աղօթքն հաւատոյ փրկեսցէ զաշխատեալն:

Քահանայութեան կարգն ի՞նչ է:

Քահանայութեան կարգը հոգևոր իշխանութիւն մի է, որ ՚ի հոգւոյն սրբոյ կառնու ձեռնադրեալն. և իշխանութիւն կունենայ պատարագ մատուցանել, անդարձ մեղաւորը կապել, և զղջացող մեղաւորին արձակում և թողութիւն տալ:

Պսակն ի՞նչ է:

Պսակն՝ եկեղեցւոյ սուրբ խորհուրդ մի է, որ այրը և կինը սիրով և հաւատարմութեամբ կը կապակցէ միմեանց հետ. որ զաւակ ծնանին, և Քրիստոսի եկեղեցին աճեցուցանեն:

## ԳԼՈՒԽ. Զ

Բարոյական առաքինութիւնք քանի՞ են:

Չորս են. այսինքն՝ խոհեմութիւն, արիութիւն, արդարութիւն, և բարեխառնութիւն:

Խոհեմութիւնն ի՞նչ է

Խոհեմութիւն է, որ անով չարը՝ բարին կը ճանաչեմք, և մէկ ըզմէկէ կը զատեմք. և ամմէն ընելու բաներնիս՝ ըստ արժանւոյն կը տնօրինենք:

Արիութիւնն ի՞նչ է:

Արիութիւն է, որ անով ամմէն դժուարութեան, և աշխարհքի փորձութեան համբերութեամբ կը յաղթեմք՝ ոչ յաջողութեան ժամանակը կը հպարտանամք, և ոչ ձախորդութեան ժամանակը կը տրտմիմք:

Արդարութիւնն ի՞նչ է:

Արդարութիւնն է, որ անով ամմէն մարդոյ արժանի և վայելուչ եղածը կընեմք. թէ պատուել պէտք է՝ կը պատուեմք, թէ վախնալ արժան է՝ կը վախնամք, թէ ողորմելու կարօտ է՝ ողորմութիւն կուտամք:

Նու այս արդարութիւն է, որ մեզնէ մեծին պատիւ ընեմք. մեզ հաւասարին հետ սիրով կենցաղավարիմք. մեզնէ պզտիկին խնամք և գթութիւն ընեմք:

Բարեխառնութիւնն ի՞նչ է։

Բարեխառնութի՛ւն ամէն անկարգ ցանկութեան սանձ և խլարն է․ որ անով չար ցանկութիւնը կը խափանի։

Այս ըսած առաքինութիւններդ ամէն ազգի՝ և ամէն մարդու հասարակ է․ քրիստոնէի յատուկ եղած առաքինութիւն ալ կա՞յ մի։

Այո՛ կայ, որ Քրիստոս Տէրը ինքն ըրաւ, և մեզ սորվեցուց․ և է այս չորսը․ խոնարհութիւն, սէր, համբերութիւն, և ներողութիւն։

## ԳԼՈՒԽ․ Է

Քանի՞ առաքինութիւն կայ, որ անոնք գործելով՝ երանութեան արժանի կըլլայ մարդս այս աշխարհքիս մէջ, և վերջապէս երանութիւն կը գըտնայ արքայութեան մէջ։

Ութը կերպ առաքինութիւն կայ, որ կըսուին ութը երանութիւնք։

Ո՞րն է առաջին երանութիւնն։

Առաջինն է, հոգւով աղքատ ըլլալ․ որ՝ մարդս իր ունեցած մարմնաւոր ստացուածքը բանի տեղ չի սեպել,

և անով չի հպարտանալ, և չունենալուն համար չի տրտմիլ:

Ի՞նչ է երկրորդ երանութիւնը:

Երկրորդն է, հեզ ըլլալ. ք՝ եթէ մէկը իւրեան թշնամութի ընէ, անոր դէմ չի բարկանալ, քէն չի պահել, և թշնամութիւն չընել. այլ փոխարէնը բարի ընել:

Ի՞նչ է երրորդ երանութիւնը:

Երրորդն է, սգաւոր ըլլալ. ք՝ իւր մեղքը լալ և սգալ. և այսպէս լալով իւր կորուսեալ հոգին գտնալ:

Ի՞նչ է չորրորդ երանութիւնը:

Չորրորդն է, քաղցեալ և ծարաւի ըլլալ արդարութե. ք՝ ինչպէս անօթի մարդը հացին, և ծարաւ մարդը ջըրոյն կը փափագի. այնպէս փափագիլ արդարութեան:

Ի՞նչ է հինգերորդ երանութիւնը:

Հինգերորդն է՝ ողորմած ըլլալ. ք՝ թէ հոգևոր և թէ մարմնաւոր ողորմութբ՝ կարօտեալ և խղճալի մարդոյն ողորմիլ:

Ի՞նչ է վեցերորդ երանութիւնը:

Վեցերորդն է, սիրտ մ՟ը ունենալ. ք՟՝ սիրտը մաքուր հայելիի պէս պահել, որ զ՟ած տեսնալու արժանի ըլլայ:

Ի՞նչ է եօթներորդ երանութիւնը:

Եօթներորդն է, խաղաղարար ըլլալ. ք՟՝ մէկ ըզ մէկու մէջ եղեալ թշնամութ՟ինը և ատելութ՟ինը վերցունելու ջանք ընել, և խաղաղու՟ի հաստատել. և այսպիսի մարդն՝ որդի ա՟յ կը կոչուի. զէրէ նման կըլլայ որդւոյն ա՟յ, որ մեր և ա՟յ մէջ եղեալ թշնամութ՟ինը՝ իւր խաչելութեամբն վերցուց, և խաղաղութ՟ի ըրաւ: Ուստի ո՛վ որ խռովութ՟ի կը սերմանէ՝ որդի սատանայի է. և ք՟ի խաչը և մահը՝ անպտուղ կընէ:

Ի՞նչ է ութերորդ երանութիւնը:

Ութերորդն է, արդարութ՟ե համար հալածում կրել. ք՟՝ ամմէն կերպ նեղութ՟ե համբերել, թէ հաւատոյ, թէ ճշմարտութ՟ե համար. ահա ք՟ս տ՟րը՝ ճշմարտութ՟ե համար աշխարհք եկաւ

արիւն Թափեց․ ինչպէս իւր ս̄բ բերանովը կը վկայէ, Թէ Յայն եկի յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեան ։

## ԳԼՈՒԽ․ Ը

Մեղքն քանի՞ կերպ է։

Երկու կերպ է․ սկզբնական և ներգործական ։

Ո՞րն է սկզբնականն ։

Սկզբնական մեղքն է, որ ադամ նախահայրէն սերեալ ունինք ամենքս ։ Նոյն այս կը ջնջուի ս̄բ մկրտութե̄ ։

Ո՞րն է ներգործականն ։

Ներգործական մեղքն է, որ յետոյ մեր կամօքը չար կը գործեմք։ Նոյն այս կը ջնջուի զղջմամբ, խոստովանութ̄, և ապաշխարութեամբ ։

Ներգործական մեղքը քանի՞ կերպ է։

Երկու․ ներելի և մահացու ։

Ներելի մեղքն ի՞նչ է:

Ներելին է այն՝ որ ըստ ինքեան թեթեւ մեղք է. կամ որ տկարութեան կամ չգիտութեան չար կը գործեմք եւ Աստուծոյ սէրը սրտերնուս մէջը ունիմք:

Մահացու մեղքն ի՞նչ է:

Մահացուն այն է՝ որ ըստ ինքեան մեծ մեղք է, կամ որ յօժար կամօք եւ գիտութեան չար կը գործեմք, եւ Աստուծոյ սէրը սրտէ կը հանեմք:

Գլխաւոր մահացու մեղքերը քանի՞ են:

Եօթն են. այսինքն՝ հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն, եւ բղջախոհութիւն:

Ո՞րն է մեղք զանցառութեան, եւ ո՞րն է մեղք առնելութեան:

Զայս գիտցի՛ր, որ Աստուծոյ պատուիրանաց ոմն յանձնառական է, որ կը պատուիրէ թէ ըրէ, ինչպէս՝ Պատուեա՛ զհայր քո եւ զմայր: Եւ ոմն հրաժարական է, որ կարգիլէ թէ մի՛ ըներ. ինչպէս՝ Մի՛ սպանաներ, մի՛ գողանար: Արդ եթէ յանձնառականը զանց առնեմք չի կատարեմք,

կրակի մէջ ընկնելու է ։ Ու եթէ հրաժարականէն հեռու չի կենամք և ոչ հրամաններին դէմ գործեմք , կրակի մէջ տանջուելու ենք ։

Քանի՞ հարկաւոր բան կայ մարդերնիս պահելու , որ մեղքէ հեռի մնամք ։

Այս չորս բանն է . մահն . դատաստանն . դժոխքն . և արքայութիւնն ։

Ա. Մ. Ի. Ն.

[illegible]

[illegible]

[illegible]

7/2